

ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

Ս/թ մարտի 30-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Կապան համայնքում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 31 քաղաքացի:

Աշխատանքի տեղավորման հարցով դիմել է տասնվեց, դրամական օգնություն ստանալու՝ չորս, գյուղատնտեսությամբ զբաղվելու աջակցության՝ երկու, Կապան-Շիկահող և Ծավ համայնքների ճանապարհների կարգավորման՝ երկու, քամուց վնասված ջերմոցի վերականգնման, շենքի տանիքի վերանորոգման, սերմի փոխհատուցման, նոր հիմնված բիզնեսի հետ համագործակցության, կացարանով ապահովման, բանկի կողմից թոշակի բռնագանձման, թոշակի չափի վերանայման հարցերով՝ մեկական քաղաքացի:

Դրամական օգնության չորս դիմումներին տրվել է դրական լուծում:

Աշխատանքի տեղավորման դիմումները վերցվել են հաշվառման:

Մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումներում մարզպետի հանձնարարությամբ ուսումնասիրվում է գյուղատնտեսությամբ զբաղվելու աջակցության, Կապան-Շիկահող և Ծավ համայնքների ճանապարհների կարգավորման, քամուց վնասված ջերմոցի վերականգնման, շենքի տանիքի վերանորոգման, սերմի փոխհատուցման, նոր հիմնված բիզնեսի հետ համագործակցության, կացարանով ապահովման, բանկի կողմից թոշակի բռնագանձման, թոշակի չափի վերանայման վերաբերյալ դիմումները:

ՀՀ Սյունիքի մարզպետարան